«Իմպլանտոլոգիա. մոդուլ 1» Մաս 1 և Մաս 2 թեմայով գիտագործնական դասընթաց

2023 թվականի ապրիլի 3-ին և ապրիլի 5-ին (Մաս 1, Մաս 2) (պարբերաբար) Երևան քաղաքում և առցանց («ZOOM» հարթակում) «Մեդիտրինա ՈՒԿ» ՍՊԸ կողմից կանցկացվի «Իմպլանտոլոգիա. մոդուլ 1» Մաս 1 և Մաս 2 թեմայով գիտագործնական դասընթաց: Ծրագիրը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով: Թիրախային լսարանը՝ բժիշկ-ստոմատոլոգներ, դիմածնոտային վիրաբույժներ: Մաս 1-ի մասնակիցներին կշնորհվի ՇՄԶ 4 տեսական կրեդիտ, մաս 2-ի մասնակիցներին՝ ՇՄԶ 3 տեսական և 2 գործնական կրեդիտ: Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք զանգահարել (033)00-32-01 հեռախոսահամարով:

ԾՐԱԳԻՐ

«ԻՄՊԼԱՆՏՈԼՈԳԻԱ. ՄՈԴՈՒԼ 1» (ՄԱՍ 1 ԵՎ ՄԱՍ 2) ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Ապրիլի 3 և 5, 2023թ., (կրկնողաբար) ք. Երևան և առցանց («Մեդիտրինա ՈՒԿ» ՍՊԸ, «Զում» հարթակ)

«Մեդիտրինա ՈՒԿ» ՍՊԸ

Օր 1՝ Մաս 1, ապրիլի 3	
17:00-19:00	**Դասախոսություն** • Ներածություն. ցուցումներ և հակացուցումներ: Բուժառուների խորհրդատվություն և մոտիվացիա: • Վերջնաարդյունքի վիզուալիզացիա: • Հարիմպլանտային հյուսվածքների առանձնահատկությունները: Գիտության կիրառումը գործնականում: • Ատամնաբնային կատարի ատրոֆիայի աստիճանի կլինիկական դասակարգումն ըստ Howell & Cawood-ի:
19:00-19:10	Ընդմիջում
19:10-21:00	**Դասախոսություն** • Որոշումների կայացման ասպեկտները: • Լնդի և ոսկրի վրա հավելյալ մանիպուլյացիաների իրականացման ցուցումներ: • Միափուլ և երկփուլ Իմպլանտացիա: Ե՞րբ է հարկավոր դնել լնդի ձևավորիչ, և ե՞րբ փակիչ պտուտակ
Օր 2՝ Մաս 2, ապրիլի 5	
16:00-19:00	**Դասախոսություն** • Ոսկրի խտության դասակարգում (K. Misch): Ոսկրերի որակական և քանակական չափանիշների գնահատում ըստ ՀՇ-ի: • Ախտորոշում. ռենտգեն պատկերների վերլուծություն: • Դասական իմպլանտացիայի գործելակարգ և գործիքակազմ: • Ոսկրային պլաստիկայի հնարավորություն: • Լնդային աուգմենտացիայի հնարավորությունները: • Ամփոփում:
19:00-19:10	Ընդմիջում

19:10-21:00	**Գործնական աշխատանք** Իմպլանտատի տեղադրում կիրառմամբ

Թիրախային լսարան՝ բժիշկ-ստոմատոլոգներ, դիմածնոտային վիրաբույժներ:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ առկա՝ 20–25, առցանց՝ մինչև 50 հոգի:

Դասընթացավար՝ Գարրի Գասլտյան

Գործնական աշխատանքի ընթացքում մասնակիցներն աշխատելու են մուլյաժների վրա: Գործնական աշխատանքների ընթացքում մասնակիցներին ներկայացվելու և քննարկվելու են նաև կլինիկական դեպքեր: